# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 17-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում կատարված կազմիաստիքային փոփոխություններով պայմանավորված, ելնելով ծառայողական անհրաժեշտությունից և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության ելքի ինդեքսները հաստատելու, փաստաթղթաշրջանառության առանձնահատկությունները կանոնակարգելու մասին» թիվ 1-Լ հրամանով հաստատված հավելվածում՝

1) 3-րդ կետում «ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների վարչություն» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ

օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչություն» բառերով, իսկ «ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչություն, ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչություն» բառերը փոխարինել «ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչություն, ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչություն» բառերով,

2) 91-րդ կետում լրացնել նոր պարբերություններ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունք 91/4

ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի վարչական գործունեության բաժանմունք 91/5»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին (աշխատողներին):

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ** **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«14» ---06--- 2022թ.

ք.Երևան